ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՅԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

European Social Charter | Charte sociale européenne

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Ինչպես կարող են մարդու իրավունքների ազգային հաստատություններն ու իրավահավասարության ազգային մարմինները համագործակցել Սոցիալական իրավունքնե-րի եվրոպական կոմիտեի հետ՝ Եվրոպական սոցիալական խարտիայի մոնիթորինգի համակարգի շրջանակներում

Դոկտոր Քլեր Լուգար,
Օլսթերի համալսարանի դասախոս,
Իրավագիտության դպրոց

Եվրոպայի խորհուրդ

Մեջբերումները (մինչև 500 բառ) թույլատրվում են՝ բացառությամբ առևտրային նպատակների համար, պայմանով, որ պահպանվում է տեքստի ամբողջականությունը, քաղվածքը չի օգտագործվում համատեքստից դուրս, չի պարունակում թերի տեղեկատվություն կամ այլ կերպ չի մոլորեցնում ընթերցողին տեքստի բնույթի, շրջանակի կամ բովանդակության մասով: Սկզբնաղբյուր տեքստը միշտ պետք է ներկայացվի որպես «© Եվրոպայի խորհուրդ, հրապարակման տարի»: Սույն փաստաթղթի ամբողջական կամ մի մասի վերարտադրման կամ թարգմանության հետ կապված մյուս բոլոր հարցումները պետք է ուղղվեն Հաղորդակցության հարցերով տնօրինությանը (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Սույն փաստաթղթի հետ կապված ցանկացած այլ նամակագրություն պետք է հասցեագրվի Սոցիալական իրավունքների դեպարտամենտ, DGI, Եվրոպայի խորհուրդ, F-67075

Սույն փաստաթուղթը թարգմանվել և տպագրվել է Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Մարդու սոցիալական իրավունքների ամրապնդումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում:

Կապվեք մեզ հետ՝

Սոցիալական իրավունքների դեպարտամենտ

Մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինություն

Եվրոպայի խորհուրդ,
1 quai Jacoutot, F-67075 Strasbourg Cedex

Էլ. հասցե՝ social.charter@coe.int

Strasbourg Cedex կամ social.charter@coe.int:

Կազմը և էջադրումը՝

Փաստաթղթերի և հրապարակումների հրատարակման դեպարտամենտ (SPDP), Եվրոպայի խորհուրդ:

Լուսանկարը՝ Shutterstock:
Սույն փաստաթուղթը տպագրական և քերականական սխալներն ուղղելու նպատակով SPDP-ի խմբագրական բաժնի կողմից չի խմբագրվել:

© Եվրոպայի խորհուրդ, 2024, սեպտեմբեր
Տպագրված է Եվրոպայի խորհրդում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **7**

Ի՞նչ է Եվրոպական սոցիալական խարտիան 7

Երկու պայմանագրերը 8

Հարմարեցված համակարգ 8

Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե 9

Կոնտակտային տվյալներ 11

ԿՈԼԵԿՏԻՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ **12**

Ի՞նչ է կոլեկտիվ բողոքների ընթացակարգը 12

Ո՞ր կազմակերպությունները կարող են բողոք ներկայացնել Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե 13

Ինչպե՞ս կարող են կազմակերպությունները բողոք ներկայացնել Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե 14

Ինչպե՞ս է գործում կոլեկտիվ բողոքների ընթացակարգը 17

ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ **22**

Ի՞նչ է ընդունված դրույթների վերաբերյալ զեկույցների ներկայացման ընթացակարգը 22

Ո՞ր կազմակերպությունները կարող են ազգային զեկույցների հետ միասին ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ 23

Ինչպե՞ս կարող են կազմակերպությունները լրացուցիչ տեղեկություններ ներկայացնել Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե 24

Ինչպե՞ս է գործում ընդունված դրույթների վերաբերյալ զեկույցների ներկայացման ընթացակարգը 25

Ո՞րտեղ կարելի է գտնել ընդունված դրույթների վերաբերյալ նախորդ զեկույցների մասին փաստաթղթեր 29

ՉԸՆԴՈՒՆՎԱԾ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ **30**

Ինչպե՞ս է գործում չընդունված դրույթների վերաբերյալ զեկույցների ներկայացման ընթացակարգը 31

AD HOC ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 33

Ի՞նչ է ad hoc զեկույցների ներկայացման ընթացակարգը 33

Ինչպե՞ս է գործում ad hoc զեկույցների ներկայացման ընթացակարգը 33

Որտե՞ղ կարելի է գտնել ad hoc զեկույցների ներկայացման ընթացակարգերի վերաբերյալ փաստաթղթերը 35

ՀԱՎԵԼՎԱԾ 1 36

Ընդունված դրույթների վերաբերյալ զեկույցների և ad hoc զեկույցների ներկայացման ժամանակացույց և Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի եզրակացությունների ժամանակացույց (տե՛ս նաև առցանց՝ հետևյալ հղումով) 36

ՀԱՎԵԼՎԱԾ 2 40

Չընդունված դրույթների վերաբերյալ զեկույցների ներկայացման ընթացակարգի համատեքստում գրավոր տեղեկությունների ներկայացման ժամանակացույց 40

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է Եվրոպական սոցիալական խարտիան

- Եվրոպական սոցիալական խարտիան միջազգային պայմանագիր է, որը պաշտպանում է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում սոցիալական և տնտեսական իրավունքները, ներառյալ՝ զբաղվածության, աշխատանքում (աշխատավայրում) անվտանգության, առողջապահության, բնակարանի, կրթության, սոցիալական պաշտպանության և բարեկեցության հետ կապված իրավունքները: Դրանով պահանջվում է, որ այդ իրավունքները երաշխավորվեն առանց խտրականության. դրանով նաև կարևորվում է խոցելի խմբերի պաշտպանությունը, ինչպիսիք են՝ տարեցները, երեխաները, հաշմանդամություն ունեցող անձինք և միգրանտները:

- Եվրոպական սոցիալական խարտիան դիտվում է որպես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի երկնմանակ, որի առանցքում քաղաքացիական և քաղաքական իրավունքներն են: Խարտիան հիմնված է համընդհանուրության, անբաժանության և փոխկախվածության նույն սկզբունքների վրա, ինչպես մարդու իրավունքների մյուս փաստաթղթերը:

- Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծ մասը (46 անդամ պետություններից 42-ը) իր պաշտոնական համաձայնությունն է հայտնել խարտիայի պահանջներին համապատասխանելուն՝ «վավերացնելով» այս պայմանագիրը: «Վավերացման» ակտի միջոցով պետությունները դառնում են խարտիայի «Կողմեր» և դրանով իսկ իրավաբանորեն պարտավորվում են ապահովել այս պայմանագրով ամրագրված իրավունքները:

Երկու պայմանագրերը

- Գոյություն ունի Եվրոպական սոցիալական խարտիայի երկու տարբերակ. սկզբնական տարբերակն ընդունվել է 1961 թվականին, իսկ վերանայված տարբերակը՝ 1996 թվականին: Վերջին տարբերակը ներառում է ավելի շատ իրավունքներ, ինչպիսիք են՝ տարեցների իրավունքները կամ աղքատությունից և սոցիալական մեկուսացումից պաշտպանության իրավունքը, ինչպես նաև դրանում վերանայվում են նախնական տարբերակում ներառված մի քանի իրավունքներ: Նախատեսվում է, որ վերանայված խարտիան աստիճանաբար կփոխարինի 1961 թվականի խարտիան: Պետությունները կարող են անդամակցել այս տարբերակներից ցանկացածին, բայց ոչ երկուսին: Ներկայումս պետությունների մեծ մասը (42-ից 35-ը) վավերացրել է Եվրոպական սոցիալական խարտիայի վերանայված տարբերակը: Այն դեպքում, երբ պետությունը վավերացնում է վերանայված խարտիան, այն պարտավորություններ է ստանձնում առնվազն 1961 թվականի խարտիայի համաձայն իր կողմից ընդունված դրույթներին համապատասխանող դրույթներով:
- Եվրոպական սոցիալական խարտիայի մոնիթորինգի ընթացակարգերին ներգրավվելու հարցը դիտարկելիս մարդու իրավունքների ազգային հաստատությունները (ՄԻԱՀ) և իրավահավասարության ազգային մարմինները (ԻԱՄ) պետք է ստուգեն, թե Եվրոպական սոցիալական խարտիայի որ տարբերակն է «վավերացրել» տվյալ Կողմ պետությունը (միայն ստորագրելը բավարար չէ): Այդ տեղեկությունը կարելի է գտնել ստորագրությունների և վավերացումների մասին աղյուսակում:

Հարմարեցված համակարգ

- Խարտիան հիմնված է «à la carte» վավերացման համակարգի վրա: Այն Կողմ պետություններին հնարավորություն է տալիս ընտրելու դրույթները, որոնք նրանք պատրաստ են ընդունել որպես պարտադիր իրավական պարտավորություններ. նրանք պարտավոր չեն ըն-

դունել Եվրոպական սոցիալական խարտիայի բոլոր դրույթները: Այնուամենայնիվ, Կողմ պետությունները պարտավորվում են ստանձնել 1961 թվականի խարտիայի նվազագույնը 10 հոդվածով կամ 45 համարակալված պարբերությամբ, իսկ վերանայված խարտիայի՝ նվազագույնը 16 հոդվածով կամ 63 համարակալված պարբերությամբ նախատեսված պարտավորություններ:

- Եվրոպական սոցիալական խարտիայի մոնիթորինգի ընթացակարգերին ներգրավվելու հարցը դիտարկելիս ՄԻԱՀ-ները և ԻԱՄ-ները պետք է ստուգեն, թե Եվրոպական սոցիալական խարտիայի որ դրույթներն են իրավաբանորեն պարտավորեցնում իրենց հետաքրքրող պետությանը՝ ճշտելով, թե որ դրույթներն է ընդունել տվյալ Կողմ պետությունը: Այդ տեղեկությունը կարելի է գտնել ընդունված դրույթների աղյուսակում:

Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե

- Կողմ պետությունների կողմից Եվրոպական սոցիալական խարտիայի իրականացումը վերահսկվում է Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի կողմից: Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն 15 անկախ փորձագետներից կազմված մարմին է՝ ընտրված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից: Դրա 15 անդամներն ընտրվում են վեց տարի ժամկետով՝ մեկ անգամ վերընտրվելու իրավունքով:

- Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն Կողմ պետությունների կողմից Եվրոպական սոցիալական խարտիայի իրականացումը մոնիթորինգի է ենթարկում լրացուցիչ ընթացակարգերի միջոցով.
    - ► կոլեկտիվ բողոքների ընթացակարգ,
    - ► ընդունված դրույթների վերաբերյալ զեկույցների ներկայացման ընթացակարգ,
    - ► *ad hoc* զեկույցների ներկայացման ընթացակարգ:

- Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն ընդունում է «եզրակացություններ» Կողմ պետությունների կողմից ներկայացված ազգային զեկույցների և իրավասու կազմակերպությունների կողմից ներկայացված կոլեկտիվ բողոքների վերաբերյալ «որոշումների» առնչությամբ: Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի կողմից Եվրոպական սոցիալական խարտիայի դրույթներից յուրաքանչյուրի վերաբերյալ տրված մեկնաբանությունը կարելի է գտնել Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի նախադեպային իրավունքի ամփոփագրում: Ամփոփագիրը նաև ներառում է խարտիայի մեկնաբանման հիմնական սկզբունքները, ինչպես նաև զեկույցների ներկայացման և կոլեկտիվ բողոքների ընթացակարգերը:

- Քանի որ որոշումներն ու եզրակացությունները վերաբերում են պարտադիր իրավական դրույթներին և ընդունվում են խարտիայով և համապատասխան արձանագրություններով ստեղծված մոնիթորինգային մարմնի կողմից, համապատասխան պետությունը պարտավոր է պահպանել դրանք: Չնայած որոշումներն ու եզրակացություններն ուղղակիորեն կատարման ենթակա չեն ներպետական իրավական համակարգերում, դրանք ձևավորում են օրենքի նորմեր և կարող են հիմք ստեղծել սոցիալական իրավունքների ոլորտում դրական զարգացումների համար՝ օրենսդրության, ինչպես նաև ազգային մակարդակում նախադեպային իրավունքի միջոցով:

- Բացի այդ, Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն կազմում է զեկույցներ՝ չընդունված դրույթների վերաբերյալ Կողմ պետությունների զեկույցներին կամ նրանց *ad hoc* զեկույցներին (տես ստորև) ի պատասխան:

- Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի գործունեության մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել դրա Կանոնակարգում և Եվրոպական սոցիալական խարտիայի կայքի համապատասխան էջում:

Կոնտակտային տվյալներ

Փոստային հասցե՝
Սոցիալական իրավունքների դեպարտամենտ
Մարդու իրավունքների և
օրենքի գերակայության
գլխավոր տնօրինություն

Եվրոպայի խորհուրդ,
1, quai Jacoutot

F – 67075 Strasbourg Cedex

Էլ. փոստ՝ Social.Charter@coe.int Վեբկայք՝ www.coe.int/socialcharter

Թվիթեր՝ @CoESocialRights

ԿՈԼԵԿՏԻՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Ի՞նչ է կոլեկտիվ բողոքների ընթացակարգը

- Կոլեկտիվ բողոքների ընթացակարգը ներդրվել է 1995 թվականին ընդունված՝ կոլեկտիվ բողոքների համակարգ նախատեսող Լրացուցիչ արձանագրությամբ:

- Կոլեկտիվ բողոքների ընթացակարգը միտված է խարտիայով երաշխավորված սոցիալական իրավունքների իրականացման բարելավմանը և սոցիալական գործընկերների ու քաղաքացիական հասարակության դերակատարների մասնակցության խթանմանը: Այդ նպատակների իրագործման համար դրանով որոշակի կազմակերպությունների թույլ է տրվում բողոքներ ներկայացնել Եվրոպական սոցիալական խարտիայի Կողմ պետությունների դեմ՝ այս պայմանագիրը ենթադրաբար պատշաճորեն չկիրառելու համար:

- Հարկ է նշել, որ Եվրոպական սոցիալական խարտիայի Կողմ պետությունները պարտավոր չեն վավերացնել կոլեկտիվ բողոքների համակարգ նախատեսող Լրացուցիչ արձանագրությունը, թեև դա նրանց խիստ խրախուսվում է: Արդյունքում, ՄԻԱՀ-ներին և ԻԱՄ-ներին առաջարկվում է հավաստիանալ, թե արդյոք իրենց համար հետաքրքրություն ներկայացնող պետությունը «վավերացրել է» կոլեկտիվ բողոքների համակարգ նախատեսող Լրացուցիչ արձանագրությունը (միայն ստորագրելը բավարար չէ), կամ, որպես այլընտրանք, պարտավորվել է պահպանել կոլեկտիվ բողոքների ընթացակարգի պահանջները՝ անելով վերանայված խարտիայի Դ(2) հոդվածով նախատեսված հայտարարությունը (Բուլղարիան, Սլովենիան և Իսպանիան արել են այդ հայտարարությունը): Միայն այդ դեպքում կա-

րող է պետության դեմ կոլեկտիվ բողոք ներկայացվել: Վերջին թարմացված տեղեկությունները կարելի է գտնել կոլեկտիվ բողոքների համակարգ նախատեսող՝ Եվրոպական սոցիալական խարտիայի Լրացուցիչ արձանագրության ստորագրությունների և վավերացումների աղյուսակում: Ներկայումս խարտիայի 16 Կողմ պետություններ համաձայնել են ստանձնել ընթացակարգով նախատեսված պարտավորությունները, և հետևաբար նրանց դեմ կարող են բողոքներ ներկայացվել:

Ո՞ր կազմակերպությունները կարող են բողոք ներկայացնել Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե

- Լրացուցիչ արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե բողոք կարող են ներկայացնել որոշակի կազմակերպություններ, եթե նրանք համարում են, որ Եվրոպական սոցիալական խարտիայի (և Լրացուցիչ արձանագրության) որևէ Կողմ պետություն պատշաճորեն չի կատարում խարտիայի պահանջները: Այդ կազմակերպությունների թվում են՝
    - գործատուների և արհմիությունների որոշ միջազգային կազմակերպություններ. դրանք են՝ աշխատողներին ներկայացնող Եվրոպական արհմիությունների կոնֆեդերացիան (ԵԱԿ), ինչպես նաև գործատուներին ներկայացնող «Բիզնես Եվրոպա» կազմակերպությունը և Գործատուների միջազգային կազմակերպությունը (ԳՄԿ).
    - միջազգային հասարակական կազմակերպությունները, որոնք Եվրոպայի խորհրդում ունեն մասնակցային կարգավիճակ և ընդգրկվել են այդ նպատակով կազմված ցանկում (Կոլեկտիվ բողոքներ ներկայացնելու իրավունք ունեցող ՄՀԿ-ների ցանկ): Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե բողոք ներկայացնելու համար ՄՀԿ-ներին իրավունքի տրամադրման վերաբերյալ հարցումների, դրա

ժամկետի երկարաձգման կամ պայմանների մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել նաև Եվրոպայի խորհրդի կայքում.

- ► այն Կողմ պետության իրավազորության ներքո գործող գործատուների և արհմիությունների ներկայացուցչական ազգային կազմակերպությունները, որի դեմ նրանք բողոք են ներկայացրել.
- ► բացի այդ, ցանկացած պետություն կարող է իր իրավազորության ներքո գործող ազգային ՀԿ-ներին շնորհել իր դեմ բողոքներ ներկայացնելու իրավունք (կախված դեպքից՝ կոլեկտիվ բողոքների համակարգ նախատեսող Լրացուցիչ արձանագրության կամ վերանայված խարտիայի Դ(2) հոդվածի համաձայն «հայտարարություն» անելու միջոցով): Մինչ այժմ դա արել է միայն Ֆինլանդիան:

- Հարկ է նշել, որ ՄԻԱՀ-ները և ԻԱՄ-ները չեն կարող բողոք ներկայացնել Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե: Սակայն, նրանք կարող են կապ հաստատել վերը նշված կազմակերպություններից որևէ մեկի հետ և աջակցել նրանց այդ գործընթացի ընթացքում: Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցը և Իրավահավասարության մարմինների եվրոպական ցանցը, որոնք գրանցված ոչ առևտրային կազմակերպություններ են, կարող են դա անել միայն այն դեպքում, երբ նրանց տրվի Եվրոպայի խորհրդում մասնակցային կարգավիճակ:

Ինչպե՞ս կարող են կազմակերպությունները բողոք ներկայացնել Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե

- Որպեսզի կոլեկտիվ բողոքը ճանաչվի ընդունելի, այն պետք է համապատասխանի տարբեր չափորոշիչների: Այդ չափորոշիչներն ամրագրված են Լրացուցիչ արձանագրությունում և Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի Կանոնակարգում,

և լրացուցիչ մեկնաբանվել են ընդունելիության վերաբերյալ անհատական որոշումների միջոցով:

- Բողոքը ներկայացվում է գրավոր:
- Բողոքը հասցեագրվում է Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի գործադիր քարտուղարին, որը գործում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի անունից:
- Բողոքն ուղարկվում է հետևյալ հասցեին.
- Սոցիալական իրավունքների դեպարտամենտ
- Մարդու իրավունքների և օրենքի գերակայության
- գլխավոր տնօրինություն, Եվրոպայի խորհուրդ
- 1, quai Jacoutot, F–67075 Strasbourg Cedex, France
- Էլ. փոստ՝ social.charter@coe.int
- Բողոքում հստակ նշվում են բողոք ներկայացնող կազմակերպության անվանումը և կոնտակտային տվյալները:
- Բողոքը ստորագրվում է բողոքը ներկայացնող կազմակերպության անունից գործելու իրավունք ունեցող անձի կողմից, ընդ որում դրանում պետք է հաստատվի, որ բողոքը ներկայացնող և ստորագրող անձն իրավունք ունի գործելու այդ կազմակերպության անունից:
- Բողոքում պետք է հաստատվի, որ բողոքը ներկայացնող կազմակերպությունն իրավունք ունի այն ներկայացնելու՝ կոլեկտիվ բողոքների ընթացակարգի իմաստով (տե՛ս վերևում՝ «Ո՞ր կազմակերպությունները կարող են բողոք ներկայացնել Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե» ենթաբաժինը):
- Եթե բողոքը ներկայացվում է միջազգային կառույցի կողմից, ապա այն պետք է կազմված լինի Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից որևէ մեկով (անգլերեն կամ ֆրանսերեն):
- Եթե բողոքը ներկայացվում է ազգային կազմակերպության կողմից, ապա այն պետք է կազմված լինի համապատաս-

խան Կողմ պետության պաշտոնական լեզվով կամ պաշտոնական լեզուներից մեկով:

- Բողոքը պետք է վերաբերի Եվրոպական սոցիալական խարտիայի Կողմ պետությանը, որը պարտավորվել է հետևել կոլեկտիվ բողոքների ընթացակարգի պահանջներին (տե՛ս վերևում՝ «Երկու պայմանագրերը» և «Ի՞նչ է կոլեկտիվ բողոքների ընթացակարգը» ենթաբաժինները):
- Բողոքը պետք է վերաբերի խարտիայի մեկ կամ մի քանի դրույթներին, որոնք ընդունվել են տվյալ Կողմ պետության կողմից (տե՛ս վերևում՝ «Հարմարեցված համակարգ» ենթաբաժինը):
- Բողոքում նշվում է, թե ինչ առումով համապատասխան Կողմ պետությունը չի ապահովել տվյալ դրույթի բավարար կիրառումը (ներկայացնելով նաև ապացույցները, վերաբերելի փաստարկներն ու հիմնավորող փաստաթղթերը):
- Բողոքով պետք է բարձրացվեն հարցեր խարտիայի մեկ կամ մի քանի դրույթներին պետության իրավունքի կամ գործելակերպի անհամապատասխանության առնչությամբ. առանձին իրավիճակների վերաբերյալ բողոքներ չեն կարող ներկայացվել:

Ինչպե՞ս է գործում կոլեկտիվ բողոքների ընթացակարգը

Ընդունելիությունը

- Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն ուսումնասիրում է վերը թվարկված բոլոր կետերը (տե՛ս «Ինչպե՞ս կարող են կազմակերպությունները բողոք ներկայացնել Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե» բաժինը) և որոշում է կայացնում բողոքի ընդունելիության վերաբերյալ:

Վարույթը

- Եթե Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն բողոքը հայտարարում է ընդունելի, ապա այն բողոքի սուբյեկտ պետությանն առաջարկում է գրավոր դիրքորոշում ներկայացնել բողոքի էության վերաբերյալ, և բողոքը ներկայացրած կազմակերպությանն առաջարկում է պատասխանել այդ դիրքորոշմանը: Հետագայում, կողմերից որևէ մեկի միջնորդությամբ կամ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի նախաձեռնությամբ, կարող են անցկացվել հանրային լսումներ:

Ըստ էության քննությունը

- Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն ուսումնասիրում է վարույթի ընթացքում ներկայացված բոլոր փաստարկներն ու ապացույցները և որոշում է կայացնում բողոքի էության վերաբերյալ: Որոշմամբ սահմանվում է, թե արդյոք բողոքի սուբյեկտ պետության իրավունքը և (կամ) գործելակերպը համապատասխանում են Եվրոպական սոցիալական խարտիայի պահանջներին:

Իրականացումը

- Բողոքի սուբյեկտ պետությունը պարտավոր է իրականացնել Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի որոշումը: Այնուամենայնիվ, որոշումը տվյալ պետության դատարանների կողմից ուղղակիորեն կատարման ենթակա չէ: Որոշման իրականացումը վերահսկվում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից, որը կարող է բանաձև ընդունել կամ առաջարկություններ ներկայացնել տվյալ պետությանը: Նախարարների կոմիտեն որևէ պարագայում չի կարող չեղարկել Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի իրավական գնահատականը:

Հետագա գործողությունների վերաբերյալ լրացուցիչ զեկույցների ներկայացումը

- Եթե Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն բողոքի էության վերաբերյալ իր որոշմամբ արձանագրում է Եվրոպական

սոցիալական խարտիայի խախտում, ապա բողոքի սուբյեկտ պետությունը տեղեկություններ է տրամադրում այդ որոշումն ի կատար ածելու համար ձեռնարկված միջոցների մասին: Այս դեպքում տվյալ պետությունը ներկայացնում է հետագա գործողությունների վերաբերյալ զեկույց (մեկական զեկույց յուրաքանչյուր որոշման համար, որով արձանագրվել են խախտումներ)՝ տվյալ որոշման վերաբերյալ Նախարարների կոմիտեի կողմից առաջարկություն ընդունվելուց երկու տարի հետո:

- Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն ուսումնասիրում է հետագա գործողությունների վերաբերյալ զեկույցը՝ պարզելու համար, թե արդյոք տվյալ պետությունն ապահովել է Եվրոպական սոցիալական խարտիայի պահանջներին համապատասխանությունը, և հրապարակում է այս առնչությամբ իր «եզրահանգումները»: Այդ եզրահանգումները փոխանցվում են Նախարարների կոմիտե և, կախված Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի գնահատականից, Նախարարների կոմիտեն կարող է բանաձևի ընդունմամբ փակել գործը կամ ներկայացնել նոր (երկրորդ) առաջարկություն:
- Կողմ պետությունների կողմից ներկայացված՝ հետագա գործողությունների վերաբերյալ զեկույցները, ինչպես նաև այս զեկույցների հիման վրա Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի եզրահանգումները (գնահատումները) հրապարակվում են կայքում:

Անհետաձգելի միջոցներ

- Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն կարող է պահանջել, որ տվյալ պետությունն անհետաձգելի միջոցներ ձեռնարկի՝ Եվրոպական սոցիալական խարտիայում ճանաչված իրավունքների հետ կապված անդառնալի վնաս հասցնելու վտանգից խուսափելու համար (կանոն 36): Նման պահանջ կարող է ներկայացվել վարույթի ընթացքում ցանկացած ժամանակ: Դա կարող է արվել Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի նախաձեռնությամբ կամ բողոքը ներկայացրած կազմակերպության պահանջով:

- Անհետաձգելի միջոցների վերաբերյալ պահանջ ներկայացնելու դեպքում բողոքը ներկայացրած կազմակերպությունը պետք է նշի հետևյալը. անհետաձգելի միջոցներ հայցելու պատճառները, հնարավոր հետևանքներն այն դեպքում, երբ դրանք մերժվեն, և պահանջվող հատուկ միջոցները: Համաձայն 36§3 կանոնի՝ Կոմիտեն պատասխանող պետության համար սահմանում է վերջնաժամկետ՝ նշված ցանկացած անհետաձգելի միջոցի իրականացման վերաբերյալ համապարփակ տեղեկություններ տրամադրելու համար:

Ինչպե՞ս կարող են ՄԻԱՀ-ները և ԻԱՄ-ները դիտարկումներ ներկայացնել այլոց կողմից ներկայացված բողոքների վարույթներում

- Համաձայն Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի Կանոնակարգի 32-րդ և 32Ա կանոնների՝ երրորդ կողմերը կարող են միջամտել կոլեկտիվ բողոքի հետ կապված վարույթին, որին նրանք այլապես անմիջական մասնակցություն չունեն:
    - Համաձայն 32-րդ կանոնի՝ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն գործատուների և արհմիությունների միջազգային կազմակերպություններին առաջարկում է որպես երրորդ կողմ դիտարկումներ ներկայացնել գործատուների ազգային կազմակերպությունների և արհմիությունների կամ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված բողոքների վերաբերյալ: Այդ առաջարկը վերաբերում է աշխատողներին ներկայացնող՝ Եվրոպական արհմիությունների կոնֆեդերացիային (ԵԱԿ) և գործատուներին ներկայացնող՝ «Բիզնես Եվրոպա» կազմակերպությանը և Գործատուների միջազգային կազմակերպությանը (ԳՄԿ): Նրանց դիտարկումները փոխանցվում են պատասխանող պետությանը և բողոքը ներկայացրած կազմակերպությանը:
    - Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն կարող է նաև առաջարկել կոլեկտիվ բողոքների ընթացակարգով նախատեսված պարտավորություններն ստանձնած պե-

տություններին, որոնց սակայն չի առնչվում բողոքը, մեկնաբանություններ ներկայացնել որպես երրորդ կողմ:

- Ի լրումն, 32Ա կանոնի համաձայն՝ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն կարող է առաջարկել ցանկացած կազմակերպության, հաստատության կամ անձի, որին այն նպատակահարմար է համարում, որպես երրորդ կողմ ներկայացնել դիտարկումներ (ներառյալ՝ ՄԻԱՀ-ները, ԻԱՄ-ները և նրանց ցանցերը՝ ENNHRI և EQUINET): Երրորդ կողմերի դիտարկումները ներկայացվում են Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում (որպես կանոն՝ առավելագույնը երկու ամիս): Դրանք պետք է լինեն հստակ, հակիրճ և անդրադառնան խնդրո առարկա կոնկրետ հարցին՝ մանրամասն շարադրելով բողոքի էությունն ու ներկայացված փաստարկները և չընդլայնեն բողոքի շրջանակները: Երրորդ կողմերի դիտարկումներն այնուհետև փոխանցվում են պատասխանող պետությանը և բողոքը ներկայացրած կազմակերպությանը: Բացի այդ, ՄԻԱՀ-ները, ԻԱՄ-ները և նրանց ցանցերը կարող են Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեին տեղեկացնել իրենց շահագրգռվածության մասին՝ որպես երրորդ կողմ դիտարկումներ ներկայացնելու առկախ կոլեկտիվ բողոքի վերաբերյալ: Այդ նպատակով նրանց առաջարկվում է կապ հաստատել Եվրոպական սոցիալական խարտիայի քարտուղարության հետ:

Որտե՞ղ կարելի է տեղեկություններ գտնել նախորդ կոլեկտիվ բողոքների վերաբերյալ

- Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի նախադեպային իրավունքին կարելի է ծանոթանալ Եվրոպական սոցիալական խարտիային վերաբերող՝ HUDOC տվյալների բազայում:
- HUDOC-ն ընթերցողներին հնարավորություն է տալիս ավելի նեղացնելու որոնումը՝ ընտրելով կոլեկտիվ բողոքների հետ կապված փաստաթղթերի որոշակի տեսակներ՝ կախված նրանից, թե ինչն է նրանց հետաքրքրում (ընդունելիության վերաբերյալ որոշումներ,

ըստ էության կայացված որոշումներ, անհետաձգելի միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ պահանջներ, բողոքը քննվող գործերի ցուցակից հանելու մասին որոշումներ, առանձին կարծիքներ կամ որոշումների հետ կապված հետագա փաստաթղթեր): HUDOC-ը նաև հնարավորություն է տալիս ընթերցողներին նեղացնելու որոնումը՝ ընտրելով որոշակի պարամետրեր, որոնք ներառված են եղել նախկին կոլեկտիվ բողոքներում՝ կախված նրանից, թե ինչն է նրանց հետաքրքրում (Եվրոպական սոցիալական խարտիայի կոնկրետ դրույթներ, նախկին որոշումներին առնչվող պետություններ կամ բողոք ներկայացրած կազմակերպություններ):

- Բադի այդ, Եվրոպական սոցիալական խարտիայի կայքը տեղեկություններ է տրամադրում բոլոր առկախ և ընթացք ստացած բողոքների վերաբերյալ: Այն ներառում է բոլոր փաստաթղթերը, որոնք փոխանակվել են կոլեկտիվ բողոքների ընթացակարգի ընթացքում յուրաքանչյուր բողոքի համար (այսինքն՝ ներկայացված բողոքները, բողոքի կողմերի և երրորդ կողմերի դիտարկումները, դիրքորոշումները և պատասխանները, ինչպես նաև Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի կողմից արձանագրված արդյունքը):

- Կոլեկտիվ բողոքների ընթացակարգի մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի կանոնակարգում (տե՛ս Մաս VIII, 23-40-րդ կանոններ) կամ Եվրոպայի խորհրդի կայքի համապատասխան էջում:

ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Ի՞նչ է ընդունված դրույթների վերաբերյալ զեկույցների ներկայացման ընթացակարգը

- Զեկույցների ներկայացման ընթացակարգը ներդրվել է 1961 թվականի Եվրոպական սոցիալական խարտիայով (տե՛ս Մաս IV) և փոփոխվել է 1991 թվականին ընդունված Թուրինի արձանագրությամբ: Թեև Թուրինի արձանագրությունն ուժի մեջ չի մտել, այն կիրառվում է Նախարարների կոմիտեի կողմից ընդունված՝ 1991 թվականի միաձայն որոշման հիման վրա:

- Զեկույցների ներկայացման ընթացակարգի նպատակն է բարելավել Եվրոպական սոցիալական խարտիայով երաշխավորված սոցիալական իրավունքների իրացումը և նպաստել Կողմ պետությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, մարդու իրավունքների ազգային հաստատությունների և իրավահավասարության ազգային մարմինների միջև կանոնավոր երկխոսությանը: Այդ նպատակների իրագործման համար դրանով պետություններին առաջարկվում է պարբերաբար զեկույցներ ներկայացնել Եվրոպական սոցիալական խարտիայի իրականացման վերաբերյալ, և որոշակի կազմակերպությունների, այդ թվում՝ ՄԻԱՀ-ներին և ԻԱՄ-ներին, թույլատրվում է ներկայացնել լրացուցիչ մեկնաբանու-

թյուններ և տեղեկություններ:

- Եվրոպական սոցիալական խարտիայի տարբերակներից ցանկացածի բոլոր Կողմ պետությունները պարբերաբար զեկույցներ են ներկայացնում Եվրոպական սոցիալական խարտիայի իրականացման վերաբերյալ: Ընդ որում, իրավունքները, որոնց վերաբերյալ պետությունները պետք է զեկույցներ ներկայացնեն, պայմանավորված են Եվրոպական սոցիալական խարտիայի այն տարբերակով, որը նրանք վավերացրել են (տե՛ս վերևում՝ «Երկու պայմանագրերը» ենթաբաժինը), և այն դրույթներով, որոնք նրանք ընդունել են (տե՛ս վերևում՝ «Հարմարեցված համակարգ» ենթաբաժինը): Հետևաբար ՄԻԱՀ-ներին և ԻԱՄ-ներին առաջարկվում է ստուգել այդ տեղեկությունները:

- Զեկույցների ներկայացման ընթացակարգի մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի կանոնակարգում (տե՛ս Մաս VII, 19-22-րդ կանոններ):

Ո՞ր կազմակերպությունները կարող են ազգային զեկույցների հետ միասին ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ

- Համաձայն Թուրինի արձանագրությամբ փոփոխված Եվրոպական սոցիալական խարտիայի 23(1) և 27(2) հոդվածների՝ գործատուների և արհմիությունների որոշ միջազգային կազմակերպություններ իրավունք ունեն ազգային զեկույցների հետ միասին Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե ներկայացնելու մեկնաբանություններ և տեղեկություններ: Դրանց թվում են՝ աշխատողներին ներկայացնող Եվրոպական արհմիությունների կոնֆեդերացիայի (ԵԱԿ) ազգային առընթեր անդամները, ինչպես նաև գործատուներին ներկայացնող «Բիզնես Եվրոպա» կազմակերպության և Գործատուների միջազգային կազմակերպության (ԳՄԿ) անդամները:

- Հարկ է նշել, որ Եվրոպական սոցիալական խարտիայի Կողմ պետու-

թյունները պարտավոր են իրենց ազգային զեկույցների պատճենները փոխանցել այդ կազմակերպությունների ազգային անդամներին:

- Համաձայն Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի երկարամյա գործելակերպի և Կանոնակարգի 21Ա կանոնի՝ ազգային զեկույցների վերաբերյալ մեկնաբանություններ կարող են ներկայացնել այլ կազմակերպություններ, կառույցներ և հաստատություններ: Դրանց թվում են (միջազգային) հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև մարդու իրավունքների ազգային մարմինները և իրավահավասարության ազգային մարմինները:

- Հարկ է նշել, որ այն, թե արդյոք և որքանով պետք է հաշվի առնվեն այդ մեկնաբանությունները, լիովին Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի հայեցողության շրջանակներում է:

Ինչպե՞ս կարող են կազմակերպությունները լրացուցիչ տեղեկություններ ներկայացնել Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե

- Ազգային զեկույցների վերաբերյալ մեկնաբանությունները ներկայացվում են Եվրոպական սոցիալական խարտիայի քարտուղարություն մինչև այն տարվա հունիսի 30-ը, որի ընթացքում Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն ուսումնասիրում է ազգային զեկույցը: Այդ վերջնաժամկետը սահմանվել է այն դեպքի համար, երբ ազգային զեկույցները ներկայացվում են դեկտեմբերին (ՍԻԵԿ-ի Կանոնակարգ): Բացառություն կարող է արվել այն դեպքում, երբ պետական զեկույցների ներկայացումը հետաձգվել է: Վերջնաժամկետները նախապես նշվում են կայքում:

- ՄԻԱՀ-ները և ԻԱՄ-ները կարող են մեկնաբանություններ կամ լրացուցիչ տեղեկություններ ներկայացնել ինչպես կոլեկտիվ բողոքների

ընթացակարգը չընդունած պետությունների կողմից ներկայացվող զեկույցների, այնպես էլ կոլեկտիվ բողոքների ընթացակարգն ընդունած պետությունների կողմից ներկայացվող զեկույցների վերաբերյալ:

- Զեկույցների ներկայացման ընթացակարգի համատեքստում ազգային զեկույցների վերաբերյալ մեկնաբանությունները Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե ներկայացնելիս ՄԻԱՀ-ներից և ԻԱՄ-ներից չի պահանջվում դրանք ներկայացնել հատուկ ձևաչափով: Այդուհանդերձ, Կոմիտեն նպատակահարմար է գտնում, որպեսզի զեկույցները՝
    - ► անդրադառնան հաշվետու շրջանի սկզբում Կողմ պետություններին տրված հարցաշարին.
    - ► պարունակեն կոնկրետ և մանրամասն տեղեկություններ այն հարցերի վերաբերյալ, որոնք անտեսվել են կամ բավարար ձևով չեն հասցեագրվել երկրի զեկույցում.
    - ► հաշվի առնեն խնդրո առարկա հոդվածի վերաբերյալ Կոմիտեի նախորդ ուսումնասիրությունն ու եզրակացությունները.
    - ► պատասխանեն խնդրո առարկա դրույթի նախորդ ուսումնասիրության ժամանակ Կոմիտեի կողմից առաջադրված հարցերին:

Ինչպե՞ս է գործում ընդունված դրույթների վերաբերյալ զեկույցների ներկայացման ընթացակարգը

Զեկույցների ներկայացման ժամանակացույցը

Նախարարների կոմիտեի՝ Եվրոպական սոցիալական խարտիայի 2022 թվականի բարեփոխումը հաստատող 2022 թվականի որոշմամբ Եվրոպական սոցիալական խարտիայի դրույթները բաժանվել են երկու խմբի (նախկին չորսի փոխարեն)՝ զեկույցների ներկայացման ընթացակարգը սահմանելու նպատակներով:

Երկու խմբերը հետևյալն են.

- Խումբ 1. հոդված 1, հոդված 2, հոդված 3, հոդված 4, հոդված 5, հոդված 6, հոդված 8, հոդված 9, հոդված 10, հոդված 18, հոդված 19, հոդված 20, հոդված 21, հոդված 22, հոդված 24, հոդված 25, հոդված 28, հոդված 29:
- Խումբ 2. հոդված 7, հոդված 11, հոդված 12, հոդված 13, հոդված 14, հոդված 15, հոդված 16, հոդված 17, հոդված 23, հոդված 26, հոդված 27, հոդված 30, հոդված 31:

Հարցերը

- Ընթացակարգն ավելի նպատակային դարձնելու և պետությունների համար զեկուցման գործընթացը հեշտացնելու համար Եվրոպական սոցիալական խարտիայի 2022 թվականի բարեփոխումից հետո Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն և Կառավարական կոմիտեն նախապես կազմում են այսպես կոչված «թիրախային հարցերը»: Այդ հարցերը փոխանցվում են Կողմ պետություններին՝ զեկուցման ենթակա տարվա սկզբին:

Կոլեկտիվ բողոքների ընթացակարգը չընդունած պետությունների կողմից պետական զեկույցների ներկայացումը

- Կոլեկտիվ բողոքների ընթացակարգը չընդունած բոլոր պետությունները 2022 թվականի բարեփոխումից հետո պետք է յուրաքանչյուր երկու տարին մեկ զեկույց ներկայացնեն վերը նշված երկու խմբերից մեկում պարունակվող դրույթների վերաբերյալ: Հետևաբար խարտիայի բոլոր ընդունված դրույթները յուրաքանչյուր պետության համար դիտարկվում են յուրաքանչյուր չորս տարին մեկ: Այդ կատեգորիային վերաբերող զեկույցները ներկայացվում են մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը:

Կոլեկտիվ բողոքների ընթացակարգն ընդունած պետությունների կողմից ներկայացվող զեկույցները

- 2022 թվականից ի վեր, կոլեկտիվ բողոքների ընթացակարգն ըն-

դունած բոլոր պետությունները յուրաքանչյուր չորս տարին մեկ զեկույց են ներկայացնում վերը նշված երկու խմբերից մեկում պարունակվող դրույթների վերաբերյալ: Հետևաբար խարտիայի բոլոր ընդունված դրույթները յուրաքանչյուր պետության համար դիտարկվում են յուրաքանչյուր ութ տարին մեկ: Այդ կատեգորիային վերաբերող զեկույցները ներկայացվում են մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը:

Հանդիպումները

- Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն կարող է իր նախաձեռնությամբ կամ համապատասխան պետության պահանջով հանդիպումներ կազմակերպել պետության ներկայացուցիչների հետ՝ քննարկելու ազգային զեկույցի մանրամասները: Գործատուների միջազգային կազմակերպությունները և միջազգային արհմիությունները, որոնց թույլատրված է ազգային զեկույցների հետ միասին մեկնաբանություններ ներկայացնել, որոշ դեպքերում հրավիրվում են մասնակցելու այդ հանդիպումներին, և նրանք կարող են այդ մասին տեղեկացնել իրենց ազգային անդամ կազմակերպություններին: Գործատուների ազգային կազմակերպությունները, ազգային արհմիությունները, ինչպես նաև ՄԻԱՀ-ները, ԻԱՄ-ները և (Մ)ՀԿ-ները նույնպես կարող են հրավիրվել մասնակցելու այդ հանդիպումներին, եթե համապատասխան պետությունը չի առարկում (կանոն 21):

Եզրակացությունները

- Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն ուսումնասիրում է ընթացակարգի շրջանակներում ստացված բոլոր զեկույցներն ու մեկնաբանությունները, ինչպես նաև հանդիպումների ընթացքում ստացված տեղեկությունները: Այնուհետև այն եզրակացություններ է ներկայացնում՝ համապատասխան պետություններից յուրաքանչյուրի կողմից Եվրոպական սոցիալական խարտիայի իրականացման վերաբերյալ: Վերջին տարիներին Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն իր եզրակացությունները ներկայացնում է հունվարին, և դրանք հրապարակվում են մարտին:

Հետագա գործողությունները

- Համապատասխան պետությունները պետք է հետամուտ լինեն Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի եզրակացություններին: Այնուամենայնիվ, այդ եզրակացությունները համապատասխան պետության դատարանների կողմից ուղղակիորեն կատարման ենթակա չեն: Եզրակացությունների հիման վրա հետագա գործողությունները վերահսկվում են Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից՝ հետագա գործողությունների ընթացակարգով (տե՛ս ստորև):

- Եթե Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն իր եզրակացությամբ Եվրոպական սոցիալական խարտիայի խախտում է արձանագրում, ապա համապատասխան պետությունն իր հաջորդ ազգային զեկույցը ներկայացնելիս տրամադրում է տեղեկություններ՝ այդ եզրակացություններն ի կատար ածելու համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ: Եզրակացությունների հիման վրա հետագա գործողություններն ապահովվում են Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից՝ հետևելով Կառավարական կոմիտեի կողմից ներկայացված առաջարկներին (որի կազմում ընդգրկված են խարտիայի Կողմ պետությունների ներկայացուցիչները, ինչպես նաև եվրոպական արհմիություններն ու գործատուների կազմակերպությունները ներկայացնող դիտորդները):

- Վերահսկման յուրաքանչյուր շրջանի ավարտին Նախարարների կոմիտեն Կառավարական կոմիտեի առաջարկների հիման վրա ընդունում է համապատասխան Կողմ պետության համար անհատական ուղղորդում պարունակող բանաձև: Եթե համապատասխան Կողմ պետությունը քայլեր չի ձեռնարկում, ապա Նախարարների կոմիտեն Կառավարական կոմիտեի առաջարկների հիման վրա ներկայացնում է առաջարկություններ՝ դիմելով պետությանը՝ վերանայելու իրավակարգավորումները և (կամ) գործելակերպը: Եվրոպական սոցիալական խարտիայի 2022 թվականի բարեփոխման արդյունքում այսուհետ շեշտը դրվում է համապատասխան տեխնիկական հանդիպումներ, առաջադեմ գործելակերպերի

փոխանակում և համագործակցության ծրագրեր նախատեսող առաջարկությունների վրա:

- Զեկույցների ներկայացման ընթացակարգի և եզրակացությունների հիման վրա հետագա գործողությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել Եվրոպայի խորհրդի կայքում:

Ո՞րտեղ կարելի է գտնել ընդունված դրույթների վերաբերյալ նախորդ զեկույցների մասին փաստաթղթեր

- Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի նախադեպային իրավունքին կարելի է ծանոթանալ Եվրոպական սոցիալական խարտիային վերաբերող՝ HUDOC տվյալների բազայում:

- HUDOC-ն ընթերցողներին հնարավորություն է տալիս նեղացնելու որոնումը՝ ընտրելով զեկույցների ներկայացման ընթացակարգի հետ կապված փաստաթղթերի հատուկ տեսակներ՝ կախված նրանից, թե ինչն է նրանց հետաքրքրում (եզրակացություններ, մեկնաբանող հայտարարություններ, առանձին կարծիքներ, եզրակացությունների հիման վրա հետագա գործողություններ): HUDOC-ը նաև հնարավորություն է տալիս ընթերցողներին ավելի նեղացնելու որոնումը՝ ընտրելով որոշակի պարամետրեր, որոնք ներառված են եղել նախորդ հաշվետու շրջաններում՝ կախված նրանից, թե ինչն է նրանց հետաքրքրում (Եվրոպական սոցիալական խարտիայի կոնկրետ դրույթներ, պետություններ կամ նախորդ հաշվետու շրջաններում արձանագրված (ան)համապատասխանություններ:

- Նախորդ ազգային զեկույցները և ներկայացված դիրքորոշումները (ներառյալ՝ (Մ)ՀԿ-ներից և արհմիություններից ստացված) կարելի է գտնել Եվրոպական սոցիալական խարտիայի կայքի՝ երկրների պրոֆիլների էջում:

ՉԸՆԴՈՒՆՎԱԾ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

- Չընդունված դրույթների վերաբերյալ զեկույցների ներկայացման ընթացակարգը նպատակ ունի խրախուսելու Կողմ պետություններին աստիճանաբար ընդունել խարտիայի բոլոր դրույթները:
- Համաձայն 1961 թվականի խարտիայի 22-րդ հոդվածի՝ Նախարարների կոմիտեն կարող է դիմել պետություններին՝ առաջարկելով նշված պարբերականությամբ ներկայացնել զեկույցներ խարտիայի այն դրույթների վերաբերյալ, որոնք նրանք չեն ընդունել խարտիայի վավերացման կամ հաստատման կամ հետագա ծանուցման ժամանակ: Այս դրույթի իրականացումն ուժի մեջ է մտել Նախարարների կոմիտեի 2002 թվականի որոշմամբ, համաձայն որի վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան վավերացրած պետությունները պետք է զեկույցներ ներկայացնեն չընդունված դրույթների վերաբերյալ՝ վավերացման ամսաթվից հետո յուրաքանչյուր հինգ տարին մեկ:
- 2022 թվականի սեպտեմբերին Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն որոշեց այսուհետ երկու խարտիաների (1961 թվականի տարբերակ կամ 1996 թվականի տարբերակ) բոլոր Կողմ պետությունների նկատմամբ խստացված ռեժիմով կիրառել չընդունված դրույթների ընթացակարգը:

Ինչպե՞ս է գործում չընդունված դրույթների վերաբերյալ զեկույցների ներկայացման ընթացակարգը

Գործողությունը

- Կողմ պետությունները գրավոր տեղեկություններ են ներկայացնում՝ նախապես սահմանված օրացույցին համապատասխան (տե՛ս սույն ուղեցույցի 2-րդ հավելվածը): Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն այնուհետև ուսումնասիրում է այդ տեղեկությունները և երկկողմ հանդիպումներ է անցկացնում համապատասխան պետության հետ այն դեպքում, երբ համարում է, որ դա կարող է նպաստել ընթացակարգի արդյունավետությանը: Այնուհետև Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն յուրաքանչյուր պետության համար կազմում է զեկույց, որում ներկայացվում են ազգային իրավիճակի վերաբերյալ իր ոչ պարտադիր բնույթի գնահատականները՝ հիմնվելով իրեն հասանելի տեղեկությունների վրա (պետության կողմից գրավոր ներկայացված կամ հանդիպումների ընթացքում ձեռք բերված տեղեկություններ):
- Համաձայն Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի Կանոնակարգի 21Ա կանոնի՝ մարդու իրավունքների ազգային հաստատությունները և իրավահավասարության ազգային մարմինները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ներառյալ (Մ)ՀԿ-ները և արհմիությունները) կարող են մեկնաբանություններ ներկայացնել պետությունների կողմից տրամադրված գրավոր տեղեկությունների վերաբերյալ՝ ոչ ուշ, քան Եվրոպայի խորհրդի կայքում նշված փաստաթղթի հրապարակումից երեք ամիս անց: Բացի այդ, անհրաժեշտության դեպքում և Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի կամ Կողմ պետությունների նախաձեռնությամբ, համապատասխան պետությունների հետ կարող են կազմակերպվել երկկողմ հանդիպումներ՝ ազգային սոցիալական գործընկերների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ:

Ժամանակացույցը

- Չընդունված դրույթների վերաբերյալ գրավոր տեղեկությունները ներկայացվում են յուրաքանչյուր հինգ տարին մեկ՝ 2-րդ հավելվածում նշված ժամանակացույցի համաձայն: Զեկույցները ներկայացվում են մինչև տվյալ տարվա մարտի 31-ը:

AD HOC ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Ինչ՞ է ad hoc զեկույցների ներկայացման ընթացակարգը

- Նախարարների կոմիտեի 2022 թվականի որոշումից հետո, որը հանգեցրեց Եվրոպական սոցիալական խարտիայի 2022 թվականի բարեփոխմանը, Կողմ պետություններից կարող է պահանջվել *ad hoc* զեկույցների ներկայացում՝ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի կողմից վերլուծության կամ գնահատման համար: Նման զեկույցներ կարող են պահանջվել լայնածավալ կամ ընդմիջական բնույթի կամ համաեվրոպական ազդեցության նոր կամ ծայրահեղ կարևոր հարցերի առաջացման դեպքում:
- Վերոհիշյալ որոշումն ընդունելուց հետո Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն և Կառավարական կոմիտեն 2023 թվականին որոշեցին Եվրոպական սոցիալական խարտիայի բոլոր Կողմ պետություններից պահանջել կենսապահովման ճգնաժամի վերաբերյալ *ad hoc* զեկույցի ներկայացում:
- *Ad hoc* զեկույցների թեման և ժամկետները որոշվում են Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի և Կառավարական կոմիտեի կողմից:

Ինչպե՞ս է գործում ad hoc զեկույցների ներկայացման ընթացակարգը

- Ինչպես սահմանված է Նախարարների կոմիտեի 2022 թվականի

որոշման մեջ, Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեին առաջարկվում է ուսումնասիրել համապատասխան պետությունների տրամադրած տեղեկությունները, որից հետո այն կարող է ներկայացնել իրավիճակի մասին ընդհանուր դիտարկում և խարտիայի տեսանկյունից լայն իրավական վերլուծություն (այդ դիտարկումները կարող են ներառել մեկնաբանող հայտարարություններ): Այնուամենայնիվ, *ad hoc* զեկույցների ներկայացման ընթացակարգի համատեքստում Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն չի կարող եզրակացություններ ներայացնել իրավիճակի՝ խարտիային համապատասխանության վերաբերյալ:

- Համաձայն Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի Կանոնակարգի 21Ա կանոնի՝ պետությունների *ad hoc* զեկույցների վերաբերյալ մեկնաբանություններ կարող են ներկայացնել այլ կազմակերպություններ, կառույցներ և հաստատություններ՝ արհմիությունների և գործատուների կազմակերպությունները, (Մ)ՀԿ-ները, մարդու իրավունքների ազգային հաստատությունները և իրավահավասարության ազգային մարմինները: Հարկ է նշել, որ այն, թե արդյոք և որքանով պետք է հաշվի առնվեն այդ մեկնաբանությունները, լիովին Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի հայեցողության շրջանակներում է:

- Հետագա գործողությունները ներառում են երկխոսություն Կողմ պետությունների հետ՝ քաղաքացիական հասարակության համապատասխան կազմակերպությունների, ինչպես նաև մարդու իրավունքների համապատասխան ազգային հաստատությունների և իրավահավասարության ազգային մարմինների ներգրավմամբ՝ պարզելու համար, թե ինչ գործողություններ են անհրաժեշտ խարտիայից բխող պարտավորությունների կատարումն ապահովելու համար: Բացի այդ, Եվրոպական սոցիալական խարտիայի Կառավարական կոմիտեն կարող է առաջարկել, որ Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններին տրամադրվի լրացուցիչ ուղղորդում կամ ընդհանուր առաջարկություններ:

Ո՞րտեղ կարելի է գտնել ad hoc զեկույցների ներկայացման ընթացակարգերի վերաբերյալ փաստաթղթերը

Կողմ պետությունների ներկայացրած ad hoc զեկույցները կարելի է գտնել Եվրոպական սոցիալական խարտիայի կայքի՝ երկրների պրոֆիլների էջում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ընդունված դրույթների վերաբերյալ զեկույցների և ad hoc զեկույցների ներկայացման ժամանակացույց և Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի եզրակացությունների ժամանակացույց1 (տե՛ս նաև առցանց՝ հետեւյալ հղումով)

Տարի	Զեկույցների ներկայացում	Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի եզրակացություններ
2023	Ad hoc զեկույց[2]	
2024	27 պետություններ, որոնք չեն ընդունել կոլեկտիվ բողոքների ընթացակարգը, զեկույցներ են ներկայացնում առաջին խմբի դրույթների վերաբերյալ	ՍԻԵԿ-ի՝ ad hoc զեկույցների հնարավոր վերլուծությունը3
2025	16 պետություններ, որոնք ընդունել են կոլեկտիվ բողոքների ընթացակարգը, զեկույցներ են ներկայացնում առաջին խմբի դրույթների վերաբերյալ	ՍԻԵԿ-ի եզրակացությունները 27 պետությունների վերաբերյալ (առաջին խմբի դրույթներ)
2026	27 պետություններ, որոնք չեն ընդունել կոլեկտիվ բողոքների ընթացակարգը, զեկույցներ են ներկայացնում երկրորդ խմբի դրույթների վերաբերյալ	ՍԻԵԿ-ի եզրակացությունները 16 պետությունների վերաբերյալ (առաջին խմբի դրույթներ)
2027		ՍԻԵԿ-ի եզրակացությունները 27 պետությունների վերաբերյալ (երկրորդ խմբի դրույթներ)

2028	27 պետություններ, որոնք չեն ընդունել կոլեկտիվ բողոքների ընթացակարգը, զեկույցներ են ներկայացնում առաջին խմբի դրույթների վերաբերյալ	
2029	16 պետություններ, որոնք ընդունել են կոլեկտիվ բողոքների ընթացակարգը, զեկույցներ են ներկայացնում երկրորդ խմբի դրույթների վերաբերյալ	ՍԻԵԿ-ի եզրակացությունները 27 պետությունների վերաբերյալ (առաջին խմբի դրույթներ)

1. 2023 թվականին ՍԻԵԿ-ը կուսումնասիրի նախորդ համակարգի համաձայն ներկայացված վերջին զեկույցները:
2. Զեկուցման ներկայիս մեխանիզմներից դեպի նոր մեխանիզմներ անցումը կառավարելու և նույն դրույթների վերաբերյալ երկու տարի անընդմեջ զեկույցներ ներկայացնելուց խուսափելու համար նախատեսվել է 2023 թվականին պարտադիր զեկույցների փոխարեն սկսել ad hoc զեկույցներից:
3. Կառավարական կոմիտեի դիտարկումը հաջորդ տարվա վերաբերյալ, որին հաջորդում է զեկույցների փոխանցումը ՆԿ-ին: Դա կիրառվում է յուրաքանչյուր տարվա համար:

2030	27 պետություններ, որոնք չեն ընդունել կոլեկտիվ բողոքների ընթացակարգը, զեկույցներ են ներկայացնում երկրորդ խմբի դրույթների վերաբերյալ	ՍԻԵԿ-ի եզրակացությունները 16 պետությունների վերաբերյալ (երկրորդ խմբի դրույթներ)
2031		ՍԻԵԿ-ի եզրակացությունները 27 պետությունների վերաբերյալ (երկրորդ խմբի դրույթներ)
2032	27 պետություններ, որոնք չեն ընդունել կոլեկտիվ բողոքների ընթացակարգը, զեկույցներ են ներկայացնում առաջին խմբի դրույթների վերաբերյալ	
2033	16 պետություններ, որոնք ընդունել են կոլեկտիվ բողոքների ընթացակարգը, զեկույցներ են ներկայացնում առաջին խմբի դրույթների վերաբերյալ	ՍԻԵԿ-ի եզրակացությունները 27 պետությունների վերաբերյալ (առաջին խմբի դրույթներ)
2034	27 պետություններ, որոնք չեն ընդունել կոլեկտիվ բողոքների ընթացակարգը, զեկույցներ են ներկայացնում երկրորդ խմբի դրույթների վերաբերյալ	ՍԻԵԿ-ի եզրակացությունները 16 պետությունների վերաբերյալ (առաջին խմբի դրույթներ)
2035		ՍԻԵԿ-ի եզրակացությունները 27 պետությունների վերաբերյալ (երկրորդ խմբի դրույթներ)
2036	27 պետություններ, որոնք չեն ընդունել կոլեկտիվ բողոքների ընթացակարգը, զեկույցներ են ներկայացնում առաջին խմբի դրույթների վերաբերյալ	

2037	16 պետություններ, որոնք ընդունել են կոլեկտիվ բողոքների ընթացակարգը, զեկույցներ են ներկայացնում երկրորդ խմբի դրույթների վերաբերյալ	ՍԻԵԿ-ի եզրակացությունները 27 պետությունների վերաբերյալ (առաջին խմբի դրույթներ)
2038	27 պետություններ, որոնք չեն ընդունել կոլեկտիվ բողոքների ընթացակարգը, զեկույցներ են ներկայացնում երկրորդ խմբի դրույթների վերաբերյալ	ՍԻԵԿ-ի եզրակացությունները 16 պետությունների վերաբերյալ (երկրորդ խմբի դրույթներ)

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Չընդունված դրույթների վերաբերյալ զեկույցների ներկայացման ընթացակարգի համատեքստում գրավոր տեղեկությունների ներկայացման ժամանակացույց

Տարի	Չընդունված դրույթների վերաբերյալ գրավոր տեղեկությունների ներկայացում (մինչև հունիսի 30-ը)
2023	Վերանայված խարտիայի Կողմ պետություններ՝ Բոսնիա և Հերցեգովինա, Լատվիա, Շվեդիա + 1961 թվականի խարտիայի Կողմ պետություններ՝ Խորվաթիա, Չեխիայի Հանրապետություն, Դանիա, Իսլանդիա
2024	Վերանայված խարտիայի Կողմ պետություններ՝ Անդորրա, Հայաստան, Ադրբեջան, Բելգիա, Հունգարիա, Իտալիա, Ռումինիա, Սերբիա, Սլովակիայի Հանրապետություն, Սլովենիա + 1961 թվականի խարտիայի Կողմ պետություններ՝ Լյուքսեմբուրգ, Լեհաստան, Միացյալ Թագավորություն
2025	Վերանայված խարտիայի Կողմ պետություններ՝ Բուլղարիա, Կիպրոս, Էստոնիա, Վրաստան, Իռլանդիա, Մալթա, Չեռնոգորիա + 1961 թվականի խարտիայի Կողմ պետություններ՝ կիրառելի չէ
2026	Վերանայված խարտիայի Կողմ պետություններ՝ Ավստրիա, Գերմանիա, Հունաստան, Լիտվա, Մոլդովայի Հանրապետություն, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Ուկրաինա + 1961 թվականի խարտիայի Կողմ պետություններ՝ կիրառելի չէ

2027	Վերանայված խարտիայի Կողմ պետություններ՝ Ալբանիա, Ֆինլանդիա, Հյուսիսային Մակեդոնիա, Թուրքիա + 1961 թվականի խարտիայի Կողմ պետություններ՝ կիրառելի չէ
2028	Վերանայված խարտիայի Կողմ պետություններ՝ Բոսնիա և Հերցեգովինա, Լատվիա, Շվեդիա + 1961 թվականի խարտիայի Կողմ պետություններ՝ Խորվաթիա, Չեխիայի Հանրապետություն, Դանիա, Իսլանդիա
2029	Վերանայված խարտիայի Կողմ պետություններ՝ Անդորրա, Հայաստան, Ադրբեջան, Բելգիա, Հունգարիա, Իտալիա, Ռումինիա, Սերբիա, Սլովակիայի Հանրապետություն, Սլովենիա + 1961 թվականի խարտիայի Կողմ պետություններ՝ Լյուքսեմբուրգ, Լեհաստան, Միացյալ Թագավորություն
2030	Վերանայված խարտիայի Կողմ պետություններ՝ Բուլղարիա, Կիպրոս, Էստոնիա, Վրաստան, Իռլանդիա, Մալթա, Չեռնոգորիա + 1961 թվականի խարտիայի Կողմ պետություններ՝ կիրառելի չէ

Եվրոպական սոցիալական խարտիան, որն ընդունվել է 1961 թվականին և վերանայվել 1996 թվականին, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի երկնմանակն է տնտեսական և սոցիալական իրավունքների ոլորտում: Այն երաշխավորում է մարդու իրավունքների լայն շրջանակ՝ կապված աշխատանքի, բնակարանի ապահովման, առողջապահության, կրթության, սոցիալական պաշտպանվածության և բարեկեցության հետ:

Համաեվրոպական մակարդակում որևէ այլ իրավական փաստաթուղթ չի տրամադրում սոցիալական իրավունքների այնպիսի ընդգրկուն և լիարժեք պաշտպանություն, ինչպես նախատեսված է խարտիայով:

Ուստի խարտիան դիտարկվում է որպես Եվրոպայի սոցիալական սահմանադրություն և համարվում է էական բաղադրիչ մայրցամաքում մարդու իրավունքների կառուցման գործում:

www.coe.int/socialcharter

CoESocialRights

PREMS010724

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը առաջատար իրավապաշտպան կազմակերպությունն է մայրցամաքում: Կազմակերպությանն անդամակցում է 46 պետություն, այդ թվում՝ Եվրոպական միության անդամ բոլոր պետությունները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, որը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագիր է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

European Social Charter | Charte sociale européenne

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE